

ԲԱՆԱԽՈՍ

Փետրվարի 2, 1998 թվ.


Թիվ 13

Հ Ի Ն Գ Շ Ա Բ Թ Ի . Գ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր Ի 1 8

ՀԱՆՅԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻ ԶԱՆԻ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՅԵՐ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ազգային անվտանգության եւ ներքին գործերի նախարար



Իմ խոսքը, քերես, նաեւ յուրահատուկ հաշվետվություն է 1997 թվականին ՆԳ եւ ԱԱ նախարարության եւ նրա ստորաբաժանումների գործունեության մասին՝ ՀՀ-ում իրավակարգի սմբարակնդման եւ հասարակական անվտանգության ապահովման, հանցագործությունների կանխման, հայտնաբերման, բացահայտման ու բնույթյան ուղղությամբ:

Հանցավորությունը չարիք է, իսկ դրա դեմ պայքարը, մեր պատկերացմամբ՝ մարդկային գործունեության ամենասահմանաժեշտ եւ ամենաազնիվ տեսակներից մեկը՝ ամենից առաջ հասարակության գերակշռող մասի պաշտպանության համար, որն իսկապես աղայիսի պաշտպանության կարիք ունի:

Ներեցեք պարետիկ ռճի համար, սակայն հանցավորությունն իսկապես չարիք է, քեւ ու մանց համար գայթակղիչ, մասնագիտության վերածվող, շահութաբեր գրաղմունք: Հանցավորությունը ժանգի նման կարող է քայքայել հասարակությունը, եքե չկասեցվի ու չխափանվի: Բայց նրա պարաղոքսն ու ողբերգությունը եեեց այն է, որ ոչ միայն ինքն է ծնում այդ ժանգը, այլն հասարակության որոշ մասը շահագրգոված է դրանում: Գրեքե չկան հասարակության խավեր, որոնք այս կամ այն չափով ախտահարված չլինեն հանցավորությամբ, քեւ այդ հանգամանքը ճանաչելու համար անհրաժեշտ են են ինքնաքննադատություն, եւ արիություն, առավել եւս, որ միշտ զտնվում են մարդիկ, ովքեր վաստերին ու կյանքի օրինաչափություններին նայում են այլ տեսանկյունից:

Բանը հասնում է նրան, որ առանձին գործիչներ «սեւաբեկվածի» կեցվածք են ընդունում ՆԳ եւ ԱԱ կողմից

«նոստր» (իբեշ) կամ «գերնախարարություն» դառնալու իբբարդեն իսկ կատարված փաստի կամ հնարավորության առնչությամբ: Բայց այդպե՞ս է, արդյոք, իրականում: Փորձենք խտեղ քվերով ու փաստերով:

Հայաստանի Հանրապետությունում իրավակարգի պահպանման հիմնախնդիրների վերաբերյալ վերլուծություններ ու դրանցից բխող եզրահանգումներ կատարելիս, կարծում եմ, մեր հայրենակիցները (եւ ոչ միայն նրանք), անկասկած, պարտավոր են իմանալ քե ին՞չ քվաքանակ է սահմանված դրանց ապահովման համար, արդյոք բավարա՞ր են այդ ուժերը, որպեսզի քաղաքացիներն իրենց պաշտպանված զգան, ինչպիսի՞ն է հանցավորության մակարդակը, քրեաժին վիճակի բնութագիրը եւ ուրիշ հարցեր, այլ ոչ քե իրավասպահ մարմինները դիտեն որպես ռեպրեսիվ մարմին, որը խաչընդատում է հասարակության զարգացմանը:

Անվտանգության մարմիններին եւ սահմանապահ գորքերին կանդրաղառնանք մեկ այլ առիթով, իսկ հիմա խտենք ներքին գործերի մարմինների մասին եւ ասենք, որ պետական բյուջեից վարձատրվում է շուրջ 17000 աշխատող, որից 6 հազարը՝ սպա, 7 հազարը՝ շարքային եւ 4 հազարը՝ ազատվարձու աշխատողներ: Արդյո՞ք այս քվաքանակը բույլ է տալիս մեզ ապահովելու հանցավորության դեմ արդյունավետ պայքարը:

«Յուրաքանչյուր 200 քաղաքացուն բաժին է ընկնում ոստիկանության մեկ աշխատող:»



Մերժ Սարգսյանը ծնվել է 1954թ. հունիսի 30-ին, Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքում: 1976թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1975-1979թթ. աշխատել է Երևանի էլեկտրատեխնիկական գործարանում՝ որպես խառատ:

1979-1988 թվականներին պաշտոնավարել է Լեռնային Ղարաբաղի կոմերիտական եւ կուսակցական մարմիններում: Եղել է կոմերիտիության՝ Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար, կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի մարզական, պաշտպանական, զանգվածային աշխատանքների, ազիտացիայի եւ պրոպագանդայի բաժինների վարիչ, կուսակցության ԼԳ մարզկոմի առաջին քարտուղարի օգնական:

1989 թվականից մինչեւ 1993թ. օգոստոս ամիսը եղել է ԼԳՀ ինքնապաշտպանության ուժերի կոմիտեի նախագահ:

1990 թվականին ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1993թ. օգոստոսին նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարար:

1995թ. մայիսից ՀՀ ազգային պետական անվտանգության վարչության պետն էր: 1994թ. պարզեցմանը վերաբերող հարցերի շրջանում:

Հայաստանի Հանրապետության նախագահի 1996թ. նոյեմբերի 8-ի հրամանագրով նշանակվել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարար:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

Վերը նշված թվաքանակը հարաբերության մեջ դնելով բնակչության թվաքանակի հետ (3 միլիոն 700 հազար), ստացվում է, որ յուրաքանչյուր 200 քաղաքացուն բաժին է ընկնում ռատիկանության մեկ աշխատող: Կարծում են, սա արդի ժամանակաշրջանում հանցավորության դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու եւ հասարակական կարգը ապահովելու գործում ստավել օպտիմալ թվաքանակն է: Սակայն հարկ կա մի փոքր պարզաբանում կատարել ՆԳ համակարգի ուժերի եւ միջոցների տեղաբաշխման վերաբերյալ, քանզի ՆԳ մարմինների խնդիրներն ու գործառնությունները բազմաբանակ են եւ բազմաբնույթ: Անկասկած, առաջին պլան է մղվում հանցագործությունների կանխման եւ բացահայտման խնդիրը, որը եւ կհամարելի գլխավորը: Այն ենթադրում է կատարված հանցագործությունների արագ եւ լրիվ բացահայտում, հանցագործություն կատարած բոլոր անձանց մեղաբանում եւ ձերբակալում: Ահա այս ոլորտում զբաղված միլիցիայի աշխատակիցների թվաքանակը անհամեմատ քիչ է. տարածքային ՆԳ մարմինների, ինչպես եւ ՆԳ մարմինների կենտրոնական ասպարտի օպերատիվ աշխատողների թիվը շուրջ 1200 է, որն ընդհանուր թվաքանակի միայն 7 տոկոսն է կազմում: Տեղին է նշել, որ մեկ օպերատիվ աշխատողին բաժին են ընկնում 2600 քաղաքացիներ:

Այլ երկրների ռատիկանության թվաքանակի հետ անգամ հայանցիկ համեմատությունը քույլ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ ՆԳ-ն ԱԱՆ-ը բնավ էլ «մոնստր» չէ ոչ այդ կտրվածքով եւ ոչ էլ իրավունքների ու վստահությունների կարծեցյալ ուզուրպացիայով:

Արձանագրենք, որ ընթացիկ տարվա 11 ամիսների ընթացքում հանրապետության 10 հազար բնակչին բաժին է ընկել 29 հանցագործության դեպք: Համեմատության համար բերեմ այլ ցուցանիշներ, ասենք, Ռուսաստանի Դաշնությունում այդ թիվը կազմում է 137, Բելառուսում՝ 113, Մոլդովայում՝ 93, Վրաստանում՝ 28 դեպք եւ այլն:

Վերլուծույթ, որ ԱՊՀ անջե, մաե աշխարհագրորդությունների բեկան կազմում է թը հատկապես նում, Ռկրաիմադատանում եւ տանում, 1997 ընթացքում, անըրում, անհրաժեշտ թվականի առաջին եռամսյակի, կիսամյակի եւ 9 ամիսների վերլուծությունները (1996 թվ. նույն ժամանակահատվածների հետ համեմատած) ցույց են տալիս, որ աճի տեմպերը կայուն նվազում են, ինչը պետք է դրական համարել: Մեր հանրապետությունում նկատելիորեն նվազել են մաե քրեական հետախուզության գծով ծանր հանցագործությունների աճի տեմպերը. 1997 թվ. 11 ամիսների ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի հետ համեմատած, դրանք աճել են ընդամենը 9 %-ով: Այստեղ նույնպես անհրաժեշտ է փաստել, որ 1997 թվ. 1-ին եռամսյակի, կիսամյակի եւ 9 ամիսների համեմատական վերլուծությամբ նույնպես արձանագրվել է աճի տեմպերի նվազում:

Հանցավորության շարժընթացում եւ կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները, դրանց վերլուծությունից բխած կանխատեսումները, օպերատիվ իրավիճակի կայունացման ակնհայտ միտումը մեզ հուսալիք է, որ 1998թ. ՀՀ ՆԳ-ն ԱԱՆ-ը ամբողջ համակարգը կաշխատի ավելի արդյունավետ եւ ամբողջությամբ կկատարի իր առջեւ դրված օպերատիվ-ծառայողական խնդիրները:

1997 թվականին իրենց ազդեցությունը պահպանել են քրեածին, կրիմինոգեն այն գործոնները, որոնք ընդհանրապես վերջին տարիներին կանխորոշում են իրավակարգի վիճակը մեր հանրապետությունում: Տիրապետող նշանակություն են ունեցել հասարակության տնտեսական եւ սոցիալական մակարդակը, բնակչության նյութական եւ հոգեւոր բարեկեցության աստիճանը, ուրիշ խաբով՝ հանցավորության սոցիալական պատճառները: Բազմաթիվ բացասական երեւոյթների, այդ թվում՝ հանցավորության նախապատճառը չէ մաե իրավապահ մարմինների արդյունավետ աշխատանքը: Քրեագետների, տնտեսագետների, հանցագործությունների դեմ պայքարի հիմնահարցերով զբաղվող մասնագետների դիտարկումների վրա խարսխվող եզրահանգումն այն է, որ տնտեսական հանցագործությունների նվազման բնագավառում լավատեսության հիմքերը սակավ են: Տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ավելի հստակորեն են ընդգծվում տնտեսվարման հանցավոր մեթոդները, աճում է անլեզալ գործող տնտեսվարող սուբյեկտների քանակը ավելանում է տնտեսական գործառնությունների իրական եկամուտները

«Առանձին գործիչներ «ա-հարեկվածի» կեցվածք են ընդունում ՆԳ-ն ԱԱՆ կողմից «մոնստր» կամ «գերնախարարություն» դառնալու իբր արդեն իսկ կատարված փաստի կամ հնարավորության առնչությամբ:»

թյունները ցույց են տալիս, որ հանցա- աճի միտում, որը տա- շուրջ 5 %: Աճի տեմպե- բարձր են Ռուսաստա- յում, Բելառուսում, Գր- Ապրելյանում: Հայաս- թվականի 11 ամիսների կազմել է 1,8 %, ընդ ո- է նշել, որ 1997

քարքանդում և համապատասխան հարկերը վճարելուց խուսափողների քիվը: Ընդ որում, նշվածը ոչ թե լուրջ, այսինքն՝ միայն Հայաստանին վերաբերող, այլ ինտերնացիոնալ, տնտեսական վերափոխում ապրող բոլոր, մասնավորապես, ԱՊՀ երկրների համար բնութագրական երևույթ է: Թեև, հանցագործության այլ ցուցանիշներով մենք, բարեբախտաբար, ունենք ուրիշ պատկեր, որի մասին արդեն խոսեցինք:

Տնտեսական նոր հարաբերությունների վերահսկողության և կրիմինալ ներքափանցումներից դրանց պաշտպանության մեխանիզմների ստեղծման գործում բոլոր տրված դանդաղություններն ու անկատարությունը նպաստում են տնտեսական հանցագործությունների աճին և որակական փոփոխությանը: Տնտեսական հանցագործությունների կառուցվածքում առաջընթաց են ապրում ռոմեոլոգիայի և առավել փանգալոք տեսակները, ձեռփորվում են հանցագործություններ կատարելու նոր եղանակներ, դրսևորվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ու տնտեսական հանցագործությունների սերտաճման դեպքեր: ՆԳ և ԱԱՆ կողմից բացահայտված տնտեսական հանցագործություններով մի ամբողջ շարք քրեական գործերի առկայությունը մեզ հիմք է տալիս այսպիսի պնդումների համար, ընդ որում՝ անհրաժեշտ նյութեր, տվյալներ և օպերատիվ լրատվություն ունենք ապագայում ևս մնամօրինակ տնտեսական լուրջ հանցագործություններ բացահայտելու ուղղությամբ:

Վերոշարադրյալի ֆոնի վրա հրամայական անհրաժեշտություն է տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը: Սա եղել է, կա ու կմնա որպես ռատիկալության կարեւորագույն խնդիրը, չնայելով այն բանին, թե ի՞նչ կարծիքի են այդ մասին և ի՞նչ փաստարկներ են ներկայացնում մեր առկա ու հնարավոր ընդդիմախոսները: Չմոռանա՞նք, որ տնտեսական հանցագործությունների փտանգավորությունը նաև երկասյր է. այն ոչ միայն խարխլում է պետության տնտեսական հիմքերը, բուլցանում երկրի տնտեսական հզորությունը, աղբատուցում բյուջեն, այլև ուղղակիորեն ազդում քաղաքացիների նյութական ապահովության, հասարակության մեջ սոցիալական արդարության սկզբունքի կենսագործման վրա: Այս տեսակետից տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի անհրաժեշտությունը, մեր կարծիքով, նաև քաղաքական խնդիր է:

Թերևս այս հանգամանքների ամբողջությունն է մեզ հիմք տվել 1997 թվականը համարելու տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի իմաստով վճարական տարի: Եվ առանց կեղծ համետության պետք է ասեմ, որ արդյունքներն ակնհայտ են: Այդ մասին են վկայում բացահայտված և հասարակական հնչեղություն ունեցող մի շարք այն տնտեսական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը, որոնց մասին ես հանգամանորեն խոսել եմ նոյեմբեր ամսին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ: Տնտեսական հանցագործությունների հետևանքով պետությանը պատճառված վնասից մի քանի միլիարդ դրամի վերականգնումը ևս ինքնին խոսում է իր մասին:

Հանցագործությունների դեմ մղվող պայքարում ՆԳ և ԱԱՆ մյուս ուղղակի արտակարգ ուղղություններն են հան-

«Դ-րսետրվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ու տնտեսական հանցագործությունների սերտաճման դեպքեր:»

դիսացել պայքարը անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների դեմ և ռատիկալության գործունեությունը օրինակաբանության պահանջներին համապատասխան իրականացնելը: լիսավոր ուղղությունների հետ մեկտեղ ուշադրության կենտրոնում են եղել ու կմնան նաև այնպիսի խնդիրներ, որպիսիք են անչափահասների հանցավորությունը, հետախուզվող հանցագործներին հայտնաբերելու հարցը, պայքարը թմրամոլության դեմ:

Առաջ անցնելով ասեմք, որ չնայելով քրեաժին իրավիճակի բարդությանը, պետական իշխանության մարմինների կողմից իրավակարգի ամրապնդմանն ու հասարակական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները տվել են իրենց դրական արդյունքը:

ՀՀ-ում օպերատիվ իրավիճակի վերլուծությունը վկայում է որոշ ուղղություններով այդ իրավիճակի բարելավման միտում, որն այլ գործոններից զատ նաև ՆԳ և ԱԱՆ որոշակի դրական աշխատանքի արդյունք է: Այսպես, չնայելով հանցագործությունների որակ չկազմող ընդհանուր աճին (1,8 %), որոշ կատեգորիայի հանցագործությունների քիվը քննարկվող ժամանակահատվածում նվազել է. մասնավորապես դիտարկու-

յալ սպանության դեպքերը նվազել են 9,6 տոկոսով, սպանության փորձերը՝ 18,4 տոկոսով, բռնաբարությունը և բռնաբարության փորձերը՝ 24,3 տոկոսով, անձնական գույքի խռոր և առանձնապես խռոր չափերի գողությունները՝ 3,4 տոկոսով, բնակարանային գողությունները՝ 9,4 տոկոսով: 8,8 տոկոսով նվազել են նաև մահվան ելքով ճանապարհատրանսպորտային պատահարները:

Ինչպես ասացինք, ՆԳ մարմինների ջանքերն ուղղված են եղել ամենից առաջ անձի դեմ ուղղված ծանր հանցագործությունների, մասնավորապես, սպանությունների կանխման ու բացահայտման խնդիրներին: Անվերսպահներն այն կարծիքին ենք, որ սպանությունները (և ոչ միայն սպանությունները) կանխելու լավագույն միջոցներից մեկը, եթե ոչ լավագույնը, դրանց արագ և լրիվ բացահայտումն է: Այս կտրվածքով, որպես միանշանակ դրական արդյունք պետք է արձանագրել այն փաստը, որ 1997 թվականի 11 ամիսների ընթացքում դիտարկյալ սպանություններով բացահայտման ցուցանիշները բարելավվել են 12,4 տոկոսով:

Սպանությունների բացահայտման աշխատանքների բնութագրական առանձնահատկություններից մեկն այն է, որ ՆԳ համապատասխան ծառայություններն զբաղվում են ոչ միայն, այսպես կոչված, ընթացիկ հանագործություններով, այսինքն՝ սովորապես կամ սովորապես որոշակի ժամանակամիջոցում կատարված սպանությունների, այլև նախորդ տարիներին կատարված այդ կարգի հանցագործությունների բացահայտումով: Այս տեսակետից, սպանությունների դեմ պայքարի վերջին տարիների պրակտիկայի համար աննախադեպ հաջողություն պետք է համարել այն իրողությունը, որ 1997 թվականի ընթացքում բացահայտվել է նախորդ տարիներին կատարված սպանությունների ինը (9) դեպք (1996թ. ընդամենը 2 դեպք): Իրականության դեմ մեղանշած չեն լինի, եթե ասեմ, որ մենք բավարար տվյալներ ունենք նաև նախկին տարիներին կատարված սպանությունների, առանձնապես հասարակական հնչեղություն առաջած որոշ սպանությունների բացահայտման ուղղությամբ: Բացահայտման ցուցանիշները բարելավվել են նաև մարմնական վնասվածքներով (+10,4 տոկոս), այդ թվում՝ ծանր մարմնական վնասվածքներով (+17,5 տոկոս),

բունարարություններով և բունարարության վարժերով (+7,2 տոկոս), պետական ունեցվածքի գործառնություններով (+7,3 տոկոս), բնակարանային գործառնություններով (+4,8 տոկոս), անձնական ունեցվածքի հավաքակառուցումներով կորուստով (+12,2 տոկոս), ավագականային հարձակումներ (+4,5 տոկոս), խարդախարհային միջոցով (+13,4 տոկոս) և այլն: Ընդհանրապես ծանր հանցագործությունների զգում բացահայտման տոկոսը վարչապետ կազմել է 62, 4 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 54,7 տոկոսի դիմաց: Ինչպես տեսնում եք, առաջընթացն այստեղ ես առկա է:

Հասարակությանը առանձնապես մտահոգում է կազմակերպված հանցավորության հարցը: Իսկապես, թուղություն դեպքում սա կայող է դառնալ այն բարդալից ուժը, որն ի վիճակի է էսկալոնըն ազդել ոչ միայն երկրի տնտեսական, ազգայական և մշակութային զարգացման վրա, այլև հանցավորության վիճակի վրա՝ առնական իմաստով: Հիստորիկ, կազմակերպված հանցավորության վտանգավորությունը պահանջում է ավելի մեծ հակազդեցություն և պետության ու հասարակության բոլոր ինստիտուտների ավելի մեծ ներդրումներ: Բայց դրա հետ մեկտեղ մասնագիտացված ստորաբաժանումների և ողջ նախարարության ձեռք բերած վարժը և աշխատանքի արդյունքները բոլոր են տալիս պնդելու, որ վիճակը հեռու է ճգնաժամային լինելուց, այնպիսին չէ, ինչպիսին եղբե՛մն ընկալվում է հասարակության ուղի խափելի կամ ներկայացվում շահագրգիռ անձանց, գործիչների կողմից:

Սիւնույն ժամանակ կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը նաև օրենսդրական աստարման կարիք ունի: Բավական չէ ևս, որ առայսօր օրենսդրականորեն ձեռակերպված չէ անգամ կազմակերպված հանցավորության քրեալրական հսկողությունը: Այս ուղղությամբ առաջին լուրջ բայն արդեն արված է: ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի ընդհանուր մասը, որը 2-րդ ընթերցմամբ ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից, առանձին հոդված է նվիրել խմբակային հանցագործության համար պատասխանատվության հարցերին: Այս իմաստով նախագծում արվել են հանցանքը մի խումբ անձանց, կազմակերպված խմբի, հանցավոր համագործակցության կողմից կատարելու հսկողությունները: Մասնագետների կարծիքով կազմակերպված հանցավորության դեմ քրեալրական պայքարի արդյունավետության բարձրացման տեսակետից առանձնապես կարևոր են նախագծի դրույթները հանցավոր համագործակցության վերաբերյալ, որտեղ, մասնավորապես, նշվում է, թե «Հանցանքը համարվում է հանցավոր հա-

մագործակցության կողմից կատարված, երևայն կատարվել է աղբյուրի համագործակցության անդամի (անդամների) կողմից ի կատարումը դրա հանցավոր նախատեսվելի, ինչպես նաև հանցավոր համագործակցության առաջադրանքով դրա անդամ չհանդիսացող անձի կողմից կատարելը»: «Կազմակերպված խումբ, հանցավոր համագործակցություն ստեղծած կամ դրանք դեկավարած անձը ենթակա է պատասխանատվության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված դեպքերում կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դեկավարելու համար, ինչպես նաև դրանց կողմից կատարված բոլոր հանցանքների համար, եթե դրանք ընդգրկվել են նրա դիտարկությանը: Հանցավոր համագործակցության մեջ մտնող մյուս անձինք պատասխանատվություն են կրում այդ կազմակերպությունը մասնակցելու և այն հանցանքների համար, որոնց նախատեսարարությունը կամ կա-

«Տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ավելի հստակորեն են ընդգծվում տնտեսվարման հանցավոր մեթոդները:»

տարմանը իրենք մասնակցել են»:

Աղբյուրական ու կարևոր է անցավոր հասնելի հանցավորության խնդիրը: 1997 թվականին անցավոր հասնելի կողմից կատարվող հանցագործությունների ընդհանուր թիվն ավելացել է 220-ով կամ 50,9 տոկոսով: Հետևաբար, անցավոր հասնելի շրջանում քրեանքին իրավիճակը մտահոգիչ է, որն, ի հարկե, կասված է ոչ այնքան իրավապահ մարմինների լավ կամ վատ աշխատանքի, որքան տարատեսակ ազգայական ու տնտեսական, երեսօրների հետ: Ստեղծվել ու գործողության մեջ է դրվել համալիր ազգայական ծրագիր, որի ոչ թե ձեռակա, այլ ռեալ իրագործումը կարծում ենք, կշտկի իրավիճակը:

ՀՀ ՆԳ և ԱԱՆ գործունեության հիմնական ուղղություններից մեկը պայքարն է թմրամիջոցների դեմ: Պետք է ասե՛մ, որ այս բնագավառում նկատվում է պայքարի ոլորտային ակտիվացում: Արձանագրվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործության 514 դեպք, որը 16 տոկոսով ավելի է, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: Կատարված, անշուշտ, այդ ոլորտի պայքարը կազմակերպող և համակարգող նախատեղծ վարչության և նրա տարածքային օղակների ակտիվ աշխատանքի արդյունքի սահմանը չէ: Սիւնույն ժամանակ պետք է նշել, որ այս բնագա-

վառում պայքարի արդյունավետության ցուցանիշների լրվաբարումը կարելի է երաշխավորել միայն հանրապետությունում թմրամիջոցների քանակը զուե մտատվոր ճշտելու պայմանով (լուտ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության տվյալների) այս պահին հաշվառման մեջ է գտնվում 1650 անձ):

ՆԳ և ԱԱՆ մարմինների կողմից զգալի աշխատանք է կատարվել փախուստի մեջ գտնվող հանցագործներին հայտնաբերելու ուղղությամբ: Բավական է ասել, որ հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերվել և ձերբակալվել են փախուստի մեջ գտնվող 1988 հանցագործներ, որոնցից 43-ը հետախույզվել են սարանություն կատարելու համար, 13-ը՝ բունարարություն, 31-ը՝ ավագականային հարձակում, 15-ը՝ կորուստ, 175-ը՝ գործություն և այլն:

Վերջին տարիներին լայն հասարակայնության, միջազգային կազմակերպությունների, իրավաբանական կազմակերպությունների ու շարժումների ուշադրությունը բեռնված է ողբիչ-աշխատանքային համակարգի հիմնարկներին: Այս հարցում ես կրասարակայնությունը մենք դիտում ենք որպես պատիժներն ի կատար անելու գոյություն ունեցող կարգի բարեխղիման, պատիժները կրելու պայմանները բարեկալելու և բարաքակցիչ չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտ պայման:

Չնայելով ԲՊԻԿԸ հիմնարկների և քննչական մեկնատարանների նախատեսված կազմակերպության բնագավառի ողվաբարություններին, նախական միջոցների արքանը, այստեղ իրավիճակը միանգամայն վերահասկելի է: Տնտեսական ծանր պայմաններում հնարավորինս ապահովված են հաստակ կոնտինգենտի սնունդը և բժշկական օգնությունը: Որոշ ողվաբարություններ ունենք տեղաբաշխման հարցում, որը որպես կրաստապ խնդիր ներկայացված է ՀՀ կատակարարության քննարկմանը:

Վերջին չորս տարիների ընթացքում ողբիչ աշխատանքային հիմնարկների և քննչական մեկնատարանների համակարգում սարանություն որե՛մ դեպք չի եղել: Այս կրաստառություններում անբաշխալ վերահասկելի է նաև օպերատիվ իրավիճակը: ԲՊԻԿԸ պատշաճ գործունեությունն ապահովելու տեսանկյունից կարևորում ենք նաև համապատասխան օրենսդրական բազայի ստեղծումը՝ ՀՀ-ում իրականացվող դատալրակական բարեխղիմանների շրջանակներում: Արդե՛ն պատասխատ է ՀՀ քրեալրատարական օրենսգրքի նախագիծը, որն անհրաժեշտ մասնագիտական քննարկումներից հետո կներկայացվի ՀՀ Ազգային Ժողովին՝ քննարկելու և ընդունելու համար:

Գտնում ենք, որ քրեակատարողական օրենսդրությունն այն ոլորտն է, որի բարեփոխումների առնչությամբ արվող առաջարկությունների քննարկմանը ամենագործուն մասնակցություն պետք է ունենան ներքին գործերի եւ, հատկապես, ՔՊԻ ոլորտի մասնագետները: ՆԳ եւ ԱԱՆ հասարակական կապերի եւ լրատվության վարչությունը «02» շաբաթաթերթում հատուկ խորագիր է նվիրել դատախազական բարեփոխումներին եւ այլ խնդիրների հետ մեկտեղ կրճատելի ու կամավորի մասն քրեակատարողական օրենսդրության ոլորտի հիմնահարցերը: Միաժամանակ գտնում են, որ առանձնակի խոհեմություն, շրջահայա-

ցություն պետք է դրսևորել եւ ճշգրիտ հաշվարկների վրա խորսխված հեռակարային լուծումներ գտնել ուղիչ-աշխատանքային հիմնարկները ՆԳ եւ ԱԱՆ համակարգի տնօրինությունից* (ենթակայությունից) Արդարադատության մախարարությանը հանձնելու խնդրի եւ մեխանիզմների հարցում: Յանկացած արմատական վերափոխման պարագայում հատկորեն պետք է հաշվի առնվեն երեւոյքի ինչպես դրական, այնպես էլ հնարավոր բացասական հետեւեւքները, ճիշտ ընտրվի հասարակության շահերի տեսակետից առավել ուսցիմնալ տարբերակը, ապահովվի կառավարելիության ավելի բարձր մա-

կարդակ, չվատարացվի արդեն իսկ գոյություն ունեցող կացությունը: Ներկայացված նյութն, անկասկած, չի սպառում ոչ միայն հանցավորության դեմ պայքարի բոլոր հրատապ հարցերը, այլեւ ՆԳ եւ ԱԱՆ գործունեության բոլոր ուղղություններն ու ցուցանիշնիերը: Գործնականորեն դա հնարավոր չէ անել մեկ հանդիպման ընթացքում, բայց հույս են հայտնում, որ այդ բացը կարելի է որոշ չափով լրացնել հարցերի ու պատասխանների միջոցով, իհարկե, մեզ տրամադրված ժամանակի սահմաններում:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- Ինչպիսի՞ն է ձեր մախարարության համագործակցությունը Ինտերպոլի հետ:

- Արդեն մի քանի տարի է, ինչ Հայաստանում գործում է Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոն, որը համարվում է մախարարության օպերատիվ ստորաբաժանում եւ իրականացնում է մեր համատեղ աշխատանքը այդ կազմակերպության հետ: Համագործակցության առյուծի բաժինն ընկնում է ինքնուրույն կախանակմանը, եւ, իհարկե, ցանկալի կլիներ պրակտիկ համագործակցությունը մի քիչ ավելի կատարելագործել:

- Խնդրում են Ձեր կարծիքն այն մասին, քե Հայաստանում ՆԳ եւ ԱԱ մախարարությունների միավորումը դրական է, քե՞ բացասական արդյունքներ է տալիս:

- Ունանք փորձում են այդ երեւոյքի միացման բացասական կողմը ներկայացնել: Այդպես չէ: Ես փորձեցի այսօր էլ տվյալներով հիմնավորել: Նախարարությունների միացումը բացասաբար չի ազդել ոչ օպերատիվ իրավիճակի, ոչ էլ հանցագործությունների բացահայտման վրա: Ընդհակառակը, միջին հաշվով 10-15 տոկոսով բացահայտումներն ավելացել են: Դրա հիմնական պատճառներից մեկը մասն այն է, որ միավորվեցին ներքին գործերի եւ ազգային անվտանգության մախարարության բոլոր հնարավոր օպերատիվ միջոցները, հնարավորությունները: Երբ ինքնուրույն ուղղվում է մեկ անձի, այդտեղ ուղղակի բացառվում է հնարավոր մրցակցությունը, ինչը միշտ չէ, որ կարող է բերել դրական արդյունքների:

- Ձե՞ք կարծում, որ ինչքան խորանում է թմրամուրքային դեմ պայքարը, այնքան քանկանում են թմրանյութերը, մեծանում են փրկագները, եւ հարստանում են, մի խտրով, ձեր համակարգում ընդգրկված անձինք:

- Ես մնան հարցադրման հետ համաձայն չեմ: Եթե դեկավարվենք այդ գաղափարախտությամբ, ապա ընդհանրապես պետք չէ պայքարել որեւէ հանցագործության դեմ, որովհետեւ ինչ որ թվեր կարող են աճել: Ես ծանոթ եմ այն տեսակետերին, որ թմրամուրքային ոչ քե հանցագործություն է, այլ՝ հիվանդություն, եւ, իհարկե, կան երկրներ, որտեղ թմրանյութերը բաց վաճառքում են: Մակայն այսօրվա մեր պայմանները, մեր գիտակցության աստիճանը դեռեւս թույլ չեն տալիս, որ թմրամուրքային համարվի հիվանդություն: Բացի դրանից, այսօր մենք ի վիճակի չենք մեր երկրում կազմակերպել թմրամուրքային բուժումը: Դա բավական նյութատար պրոցես է, եւ կարծում եմ, դրան պետությունը կանդրադառնա այն ժամանակ, երբ կունենա բավարար միջոցներ:

- Ինչպե՞ս է ընթանում կաշառակերության դեմ պայքարը:

- Կարծում եմ, որ մենք ամբողջ ուժով չենք պայքարում: Մենք ասելով նկատի ունեն ամբողջ հասարակությունը, որովհետեւ վտահ են, որ հայտնաբերված դեպքերը իրողության մի չնչին մասն են: Առանց քաղաքացիների օժանդակության հնարավոր չէ այդ չարիքի դեմ պայքարել, ուղղակի հնարավոր չէ: Այսօրվա մեր օրենսդրությունը պահանջում է, որպեսզի եւ կաշառատուն, եւ կաշառակերը ընդունեն այդ փաստը, ինչը շատ դժվար է: Մի քիչ ոչ մասնագիտորեն բացատրեմ, որպեսզի հասկանալի լինի. եթե մույնիսկ անվտանգության կամ ոստիկանության աշխատակիցները տեղում, ինչպես ոռոսներն են ասում՝ «ս պոլիցնիս» ձերբակալում են պաշտոնատար անձին, որը ստացել է, ասենք, 10 հազար դոլար կաշառք, դա բավական չէ, որ ՀՀ քրեական օրենսդրությամբ այդ պաշտոնյան դատապարտվի: Անհրաժեշտ է, որ կաշառատուն ա-սի. «Այո, եւ կաշառք եմ տվել, իսկ կաշառակերը կաշառք է վերցրել»: Եվ ամենից կարեւորն, իհարկե, կաշառատուն է: Եթե կաշառատուն մույնիսկ մեկ անգամ մախարարության ժամանակ ասի, որ կաշառք է տվել, իսկ դատարանում հայտարարի, քե չի տվել, այլ ուղղակի պարտքով է տվել, դատարանը չի դատապարտի կաշառք վերցնողին: Մա է մեր օրենսդրության պարադոքսը:

- Եվս մի փոքրիկ հարց. ինչո՞ւ ոստիկանությունը, որը հսկում է փողոցները, շարունակում է փող վերցնել, որպեսզի մեղմի պատիժը:

- Դժվար է ասել՝ ոստիկանը փող է վերցնում, որ պատիժը մեղմի՞, քե՞ ընդհանրապես չպատժի: Եթե որեւէ մեկն այսօր ասի, քե ոստիկանության որեւէ աշխատակից կաշառք չի վերցնում, պետք չէ այդ մարդուն հավատալ: Կա այդ չարիքը եւ ունի բավական լուրջ հիմքեր, դա, իհարկե, արդարացում չէ, բայց կարեւորն այն է, որ համակարգում պայքար է ծավալվում այդ չարիքի դեմ, եւ 97 թվականին քրեական գործ է հարուցվել ոստիկանության 90 աշխատակիցների դեմ: Մա լուրջ թիվ է, որ պետք է մենք հաշվի առնենք:

- Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում ՆԳ բերված անձանց նկատմամբ բռնությունների կատեցման ուղղությամբ:

- Ըստերը բազմաբնույթ են՝ սկսած հրահանգների, ցուցումների փոփոխումից եւ նորերի հաստատումից, այդպիսի արարքներ թույլ տված ոստիկանների նկատմամբ խիստ միջոցներ կիրառելուց, ընդհուպ մինչեւ քրեական գործ հարուցելը: խտք, որ այս

տարի Գյումրիում տեղի ունեցած ողբերգության անփոփոխ հարցով է քրեական գործ ուսուցանողական չորս աշխատակիցների նկատմամբ, եւ դրա նախաձեռնողը եղել է նախարարությունը: Այնպես որ, մենք այդ հարցերին շատ խիստ ուշադրություն ենք դարձնում եւ անձնակազմի հետ համոզմունքների ժամանակ միշտ էլ շեշտում ենք, որ առանձնակի ուշադրության պետք է արժանանան այն մարդիկ, ովքեր առաջին անգամ են ուսուցանողական հետ գործ ունենում, ովքեր միայն կասկածվում են հանցագործության մեջ: Տարբերակում անպայման պետք է լինի: Մի բան է, երբ մարդ մարդասպանության համար է բերման ենթարկվում, եւ այլ բան է, երբ բերման է ենթարկվում պարզելու համար՝ հարեւանի տնից ծխախոտ գողացել է, քե ոչ:

- **Չե՞ք կարծում, որ թմրամոլներին բանտերն ու դարկերը արջի ծառայություն է նրանց համար: Բանտերից մարդիկ դուրս են գալիս աստիճանները քայքայված, կենսագործությունը խաթարված եւ հանցավոր նոր մասնագիտություններ ստացած:**

- Ես հարցին հարցով կարող եմ պատասխանել. իսկ չե՞ք կարծում, որ այդ երիտասարդները արջի ծառայություն են մատուցում մատաղ սերնդին, այն 2-րդ, 3-րդ դասարանցիներին, ովքեր տեսնում են, թե ինչպես է իրենց հարեւան «խաբուշին» թմրանյութ օգտագործում: Իհարկե, պրոբլեմ կա: Եթե մենք թմրամոլին դատասպարտում ենք, եւ նրան տանում են գաղութ, սպա պարտավոր ենք այնտեղ ապահովել նրա բուժման պայմանները: Բայց չեմ կարծում, որ այսօր մեր հանրապետության առջեւ ծառայած գլխավոր խնդիրը սա է: Բազմաթիվ պրոբլեմներ

կան, որ պետությունը լուծում է իր բյուջեի հնարավորությունների չափով:

- **Ինչո՞ւ քրեական օրենսգրքից չեն հանվում արվամուրթյունը, թմրամուրթյունը, մարմնավաճառությունը, բազմակնությունը արգելող հոդվածները:**

- Հարց տվողը մի քիչ անտեղյակ է մեր քրեական օրենսգրքից: Օրինակ, մարմնավաճառությունը չի պատժվում ՀՀ օրենքներով: Երբ քերթեքում գրում են, թե մարմնավաճառները փողոցներում են, իսկ ուսուցանողները ձեռքերը ծալած՝ ոչինչ չեն անում, չեն հասկանում, որ ուսուցանողները որեւէ բան անելու իրավունք չունեն՝ օրենքի տեսակետից: Իհարկե, ձեռք գտնվում են: Բայց դա ես անօրինակություն եմ:

- **Որքան զիտեմ, անչափահասների մասնակցությամբ հանցագործություններն աճել են 50 տոկոսով, չե՞ք կարծում, որ մի բանի տարի հետո հանցագործության մակարդակը կարող է կարուկ աճել: Ի՞նչ է արվում այդ հնարավոր զարգացումը կանխելու համար:**

- Այստեղ կարծելու բան չկա: Ես ասացի, որ հանցագործությունները 50 տոկոսով աճել են, բայց դիտարկելով բերեցի նաեւ բացարձակ քիվը՝ 200: Եվ չեմ կարծում, որ 200 հանցագործությունն այնպիսի ցուցանիշ է, որ պետք է մեզ մտահոգի, թե մի բանի տարի հետո հանցագործությունը կարող է մեզ խեղդել Հայաստանում: Ո՛չ, այդպիսի մտավախություն ես չունեմ: Մանավանդ, շեշտեցի, որ այդ հանցագործություններն ունեն սոցիալական հիմք: Իսկ ես վստահ եմ, որ մի բանի տարի անց Հայաստանում սոցիալական վիճակը բավարար կլինի:

ՀԻՆՉԱԲԹԻ, ՓԵՏՐՎԱՐԻ 19-ԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ
ԴԵՍՊԱՆ**

ՄԻՇԵԼ ԼԵԳՐԱՆ

ներկայացնում է

**«ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՅՍՕՐ»**

Փետրվարի 19-ին, ժամը 17:00

Հայաստանի ամերիկյան համալսարանի
փոքր դահլիճ
Հասցեն՝ Երևան, Բաղրամյան 40
Հեռ. 27-16-58

Մուտքն ազատ է



ԲԱՆԱԽՈՍ

«Ղասախոսությունների շարք»
ծրագրի տեղեկագիր

Ծրագրի ղեկավար՝
Վարդան Օսկանյան
Տեղեկագրի համակարգող՝
Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան
համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58
տպաքանակ՝ 99

Հասցեատեր՝